ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

Երևան-0010, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 2-րդ մասը և ուսումնասիրելով ՀՀ վարչապետի աշխատակազմի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված ՎԱՇՎՏՄ-ԷԱՃԱՊՁԲ-25/24 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգին վերաբերող փաստաթղթերը՝ ստորև ներկայացվում է «ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) (ՀՎՀՀ 02910767) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ որոշումը.

«ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ-ն մասնակցության հայտ է ներկայացրել վարչապետի աշխատակազմի կողմից կենցաղային և էլեկտրական սարքավորումների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՎԱՇՎՏՄ-ԷԱՃԱՊՁԲ-25/24 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 01.11.2024թ. կայացած նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ աճուրդի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով նվազագույն գնային առաջարկ ներկայացրած «ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ-ի հայտը չի համապատասխանել հրավերի պահանջներին, մասնավորապես.

- գնման ընթացակարգի դիմում-հայտարարության 1)-ին ենթակետը չի համապատասխանել հրավերի պահանջներին (բացակայել է «իրեն փոխկապակցված անձինք» արտահայտությունը),

- գնման ընթացակարգի դիմում-հայտարարության մեջ ռուսերեն լեզվով անվանումը գրված է հայերեն,

- գնման ընթացակարգի դիմում-հայտարարությունը ստորագրված չէ

- բացակայել է իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը (հրավերի հավելված 1.3),

- 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, մակնիշը, արտադրողի անվանումը և տեխնիկական բնութագիրը լրացված չեն:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետը՝ Հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով նիստը կասեցնել և ծանուցել «ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ-ին՝ առաջարկելով սահմանված ժամկետում շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

05.11.2024թ.-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրությամբ Հանձնաժողովն արձանագրել է, որ «ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը շտկվել են մասամբ. չի ներկայացվել առաջարկվող ապրանքների ապրանքային նշանը, մակնիշը, արտադրողի անվանումը, ինչպես նաև չի շտկվել դիմում հայտարարությունը և չի ներկայացվել իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվությունը:

Ըստ այդմ, նույն արձանագրությամբ Հանձնաժողովը որոշել է ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով նվազագույն գնային առաջարկ ներկայացրած «Գարանտ 24» ՍՊԸ-ի հայտը մերժել՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 42-րդ կետը, ինչպես նաև 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած՝ հիմք ընդունելով Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը:

Հանձնաժողովը որոշել է նաև առաջարկել պատվիրատուի ղեկավարին «ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ–ի նկատմամբ նախաձեռնել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ ընթացակարգ:

Միաժամանակ, 05.11.2024թ. պատվիրատուն գնումների պաշտոնական տեղեկագրում հրապարակել է վարչապետի աշխատակազմ կարիքների համար ՀՀՎԱ-ԷԱՃԱՊՁԲ-25/24 ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարություն:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման կամ պայմանագրի ապահովումը կամ համաձայնագիրը կնքելու նպատակով պայմանագիրը կնքած անձը չի փոխարինում տուժանքի ձևով ներկայացված որակավորման կամ պայմանագրի ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերության համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա: Նույն մասում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին:

Պատվիրատուն արձանագրում է, որ «ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ-ն իր կողմից գնման ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով իր հայտով ներկայացված փաստաթղթերում արձանագրված անհամապատասխանությունները սահմանված ժամկետում չշտկելով՝ խախտել է ***գնման գործընթացի շրջանակում իր կողմից սպանձնված պարտավորությունը,*** որը հանգեցրել է գնման գործընթացին Ընկերության հետագա մասնակցության դադարեցմանը***:***

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ առկա են «ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ-ին օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերությամբ նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը, և որոշում եմ՝ «ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ-ին ներառել նշված ցուցակում:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐԻՉ

ԳԱՐԻԿ ԲՈՇՅԱՆ